


Լ. ԶԻՒՎ



ՈՒՅԱՆԵՐ
ԳՄԵՈԸ

ՊԵՏՐՈՍ

891-715
9-60



- 6 NOV 2011

891.7115 ԼԵՎ ԶԻԼՈՎ

9-60

Այ


ՈԼՅԱՅԻ ՀՄԵՐԸ

Թարգմ. Գ.Ա.Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Նկարները՝ Ա. Գ.Ա.Վ. և Դ.Ա.Յ. Ա. Յ.



ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՈՏԱՆԵԿԱՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938



ՍԱՌՑԱԼՈՒԼԱՆ

Փոքրիկ Ոլյան կանգնած ե դռան պստիկ
պատշտամբում։ Կարմիր-կարմիր արև ե։
Չյունը կայծերի պես ցոլում ե։ Սառնամանիքը
մարդու քիթ ու ականջ ե դաղում։ Ի՞նչ լավ ե։

Բայց ամենից լավը սառցալուլան ե՝ յեր-
կար, գազարի պես հաստ ու ինքն ել՝ կար-
ծես խկական ապակուց։ Այ թե ձեռքս ընկ-
ներ։

Ոլյան տեսնում ե, վոր վայտը ձեռքին
մի ոտար քեռի յե անցնում մոտով։
— Քեռի, այն լուլան դցես։ Այ, հրեն
կախ ընկած ե։




6280
38



Քեռին փայտով խփեց—
լուլան վայր զցեց։ Բայց լու-
լան ծլընգ՝ ընկավ ձյան մեջ,
թաղվեց, ել չերևաց։

Ույան մտնում ե ձյան կույ-
տի մեջ, վոր լուլան հանիւ
գնում, գնում, որորվում ընկ-
նում ե։ Հենց սառցալուլ՝
թաղված տեղը հենվում ե...
Ու ձեռքերի վրա ընկնում
ձյան մեջ։ Զյունը լցվում ե
թևքերը։ Թպրտում, թպրտում,
հաղիվ դուրս ե գալիս։ Դե հիմա յեկ ու
լուլան գտիր։ Վենց գտնես։ Ամբողջ ձնա-
կույտը տրորվել ե։



Ույան տեսնում ե, վոր
թիակն ուսին՝ մի ուրիշ քեռի
յե մոտովն անցնում։

— Քեռի, լուլան ձյունի
տակից հանես։ Այ, այստեղ կախ ընկած եք։

Փայտով ցած զցեցինք։ Ընկավ ձյան մեջ։
Այ, այստեղ։

Քեռին ամբողջ ձնակույտը
թիակով քանդում— գցում ե
ձնակապարհի վրա։

Լուլան հենց այդտեղ եր,
վոր կար։

Ույան լուլան վերցնում—
վաղ ե տալիս տուն։

— Մայրիկ, սառցալուլ
յեմ գտել։

Մայրիկը նայում ե Ո-
ւյային։

— Վայ աման, այդ վոր-
տեղ ես այդպես թափալ
տվել։ Լուլան դիր ափսե-
յի մեջ։ Շուտ շորերդ
հանիր։

Մայրիկն Ույայի հագից



փոքրիկ մուշտակը, վալենկաներն ու գլխարկը հանեց, ձյունը թափ տվեց ու նրա ձեռքերը սրբեց: Իսկ Տիմկա շնիկը թոշկոտում, մսզստում ե. խաղալ ե ուզում: Ույան հանվեց, պահարանից վերցրեց ծայրին թուղթ կապած թելն ու միջանցքում սկսեց Տիմկայի հետ վազվզել: Վազվզեց, վազվզեց, հոգնեց: Ճաշն ել արդեն պատրաստ ե:

Ույան ճաշեց ու հիշեց իր սառցալուան: Գնաց փնտրելու:

Ափսեն գտավ, բայց մեջը՝ ջուր: Իսկ լուան չկա ու չկա:

— Մայրիկ, ուր ե իմ լուլան: Չեմ իմանում ափսեյի մեջ ով ե ջուր լցրել լուլան ել դեն գցել:

— Այ, այ,— ծիծաղում ե մայրիկը: — Բայ իմանում, զոր լուլան սառցից ե, իսկ սառույցը տաք տեղը հալվում ե: Զուրը սառցնես՝ սառույց կդառնա: Սառույցը տաքացնես՝ ջուր կդառնա:



ՀԵՏՔԵՐԸ

Ույան առավոտը դուրս յեկավ բակն զբունելու: Տեսնում ե՝ բոլոր շավիղները ձյունը ծածկել ե: Զյան միջով ե գնում: Զյունը փորփոշ ե, փափուկ: Վրայով դեռ գնացող չի յեղել: Ույան առաջինն ե:



Վոչ, առաջինը չե: Հրեն, ելի մի բանի հետք կա: Դարձյալ պստիկ տոնածառի նման ե, միայն թե ավելի մեծ: Բայց հրեն, ելի հետքեր՝ պուճպուճ: Տոնածառի նմանող հետքերը հանկարծ կորչում են, իսկ պուճ-պուճ հետքերը

յետ են դառնում: Իսկ ձյունն ելի փափուկ ե, փորփոշ: Վրայով դեռ գնացող չի յեղել: Ույան առաջինն ե:

Վոչ, առաջինը չե: Հրեն, ելի ինչ հետք կայերկու զոլանի: Զուրերը լայն են — վրայով

կարելի յե քայլել։ Զոլերը յետ են դարձել դեպի ձյան կույտը, գնացել են առաջ, թեքվել տան հետևն ու ել չկան։ Բայց հրեն, Ելի հետքեր՝ վանդակավոր, զործած, մեծ-մեծ։ Մի շավղից դուրս են յեկել ու դեպի մյուսը գնացել։ Զյունը դարձյալ փափուկ ե, փորփոշ։ Վրայով գնացող չի յեղել։ Ոլյան առաջինն ե։

Ոլյան հասավ մորաքույր Կատյայի պատըշգամբին։ Մորաքույր Կատյային հյուր ե յեկել։ Նստեց սնդուկին։ Նստել՝ նոր կրկնակոշիկներով թխթխկացնում ե սնդուկին ու պատմում պստիկ տոնածառի նմանող փոքրիկ հետքերից և բծանման հետքերից... Իսկ մորաքույր Կատյան ասում ե.

— Այդ ծիտիկն ե թոչկոտել, իր համար կուտ փնտրել ու պստիկ տոնածառի պես հետքեր թողել։ Բծերինմանող հետքերն ել կատուն ե թողել։ Ծիտիկը կատվին տեսնելուն պես թռել ե, ու նրա հետքերը վերջացել են։ Կատուն ել տուն ե



գնացել։ Ագռավը թոշկոտել, կուտ ե փնտրել ու մեծ տոնածառի պես հետքեր թողել։ Պուճ-պուճ հետքերն ել մեկն ու մեկի շունն ե թողել։ Ագռավը շանը տեսել, վախեցել թռել—գնացել ե, ու նրա հետքը վերջացել ե։ Իսկ շունը տուն ե գնացել։ Զոլավոր հետքերն ել Միշայի թողածն են—նա յե դահուկներով սահել։ Իսկ վանդակավոր հետքերը Յեգոր պապի տրեխներինն են։

Այսպես բոլորի մասին ել իմացավ Ոլյան։ Վոչ վոքի չի տեսել, միայն հետքեր ենկատել բայց բոլորի մասին ել

իմացավ, թե ով ուր և ինչու յե գնացել։


Ոլյան գնում ե տուն։ Տեսնում ե՝ ձյան վրա ելի նոր հետքեր կան։ Մորաքը ըստ պատշտամբից մինչև տուն հասնելը։ Քյարթ-



Քյարթ՝ նախշած գաթի պես: «Այդ յես եմ
նոր կրկնակոշիկներով զնացել մորաքույր
կատյայի մոտ,—մտածում ե Ոլյան: Հիմա
իմ մասին ել բոլորը կիմանան: Քյարթ-
քյարթ՝ նախշուն գաթի պես հետքերս կտես-
նեն ու կճանաչեն»:

Վ Ո Զ Ն Ի Կ Ը

Ոլյան ու մայրիկը հյուր եյին գնում մորա-
քույր կլաշայի տուն: Մորաքույր կլաշան
հեռու՝ Ելեկտրական գործարանի մոտ ե ապ-
րում: Գործարանում նա Ելեկտրական լամ-
պիկներ ե շինում: Ամբողջ քաղաքն ավտոբու-



սով պետք ե անցնեն: Այ հետաքրքիր բան:
Մեկ տրոլեյբուսն ե ոլանում, մեկ՝ տրամ-
վայր, մեկ կարմիր բանակայիններն են յեր-
գելով անցնում, մի տեղ խաղալիքների խա-
նութ ե, մի տեղ՝ տիկնիկ-յերեխանների խա-
նութ. սարից այնպես են ոլում, ասես խ-

կական լինեն։ Բա ժողովնւրդը, ժողովնւրդը։

Տեղ հասան, իսկ մորաքույր Կլաշան յերկու կատու և մի փոքրիկ վոզնի ունի։

Ոլյան մտնելուն պես կատուներին տեսնում ե։ Կատուներից մեկը գորշագույն ե, մյուսը՝ շեկ։ Յերկուսն ել մորաքույր Կլաշայի մահճակալին քնած են։ Իսկ վոզնիկը չի յերկում։

— Բա ուր եքո վոզնիկը, — հարցըց Ոլյան։

— Միքիչ սպասիր։ Հենց վոր մութն ընկնի, կզա, — ասաց մորաքույր Կլաշան։ Հրեն, նրա ամանն անկյունում դրած ե։ Նա իմ գիշերային բնակիչն ե։ Ամբողջ ցերեկը քնում ե, իսկ գիշերը ման ե գալիս։

Ոլյան սպասեց, շատ սպասեց։ Վազուց մութն ընկել եր։ Ելեկտրական լամպը վառել ելին, բայց վոզնիկը չկար ու չկար։ Սպասելուց ձանձրացավ, սկսեց գնդակ խաղար։ Նստեց հատակին։ Գրնդակը զլորեց դեպի բուֆետը, կպավ բուֆետին ու յետ դարձավ դեպի Ոլյան։ Հանկարծ գնդակը ծլընդ՝ ընկավ բուֆետի ծլընդ՝ ընկավ բուֆետի մոտ հետեւ մի տեսնեմ, — ասում

հետեւ ու հենց այնտեղ ել մնաց։ Ոլյան



գնաց գնդակը վնարելու, բայց բուֆետի հետեւ վից վը՛ֆ-վը՛ֆ-վը՛ֆ... ասես ավտոմոբիլ լիներ։ Ոլյան վախեցավ — փախավ մայրիկի մոտ։

— Այնտեղ՝ բուֆետի հետեւ մեկը փընչփընչում ե։

— Վոզնիկն ե, ելի, — ասում ե մորաքույր Կլաշան, — զու քո գնդակով նրան արթնացրել ես։

— Բա ինչու յե վինչացնում։

— Քեզ ե վախեցնում։

— Նա մեծ ե։

Իսկ վոզնիկը դուրս յեկավ։ Կլոր ե, բոլոր կողմերից ասեղներ են ցըց-ված։ Դունչը կարծես խոզի դունչ լինի, միայն թե մազի մեջ կորել ե։ Գալիս ե, բայց քարշ դարձվ առանց շտապելու։ Կանգ ե առնում, դունչը բարձրացնում, չորս կողմը պտտացնում ու նորից քարշ ե գալիս։

— Ամանը տուր մի տեսնեմ, — ասում ե մորաքույր Կլաշան, — նրա համար ընթրիք պատրաստենք։



Հացը բրդեց, վրան կաթ լցրեց ու դրեց
հատակին։ Վոզնիկը դեռ ամանին չհասած՝
յերկու կատուն ել վրա պրծան ու սկսեցին
կաթը լակել։ Վոզնիկը մոտեցավ, խցկեց նրանց
արանքը և ինքն ել սկսեց ուտել։ Միայն թե
չի լակում, այլ չպչպացնում եւ։ Ասես խոզ
լինի։

Մինչ նա առանց
շտապելու չպչ-
պացնում եր, կա-
տուները նրա ամ-
բողջ ընթրիքը կե-
րան ու գնացին։
Վոզնիկը մնաց մենակ, դունչը կախ դցեց հա-
տակին ու մնաց անշարժ։

— Նա քնեց, — հարցրեց Ոլյան։

— Վո՞չ, — պատասխանեց մորաքույր Կլա-
շան, — կատուներից ե
նեղացել։ Հրես, հիմա
նրա ամանը նորից կը ց-
նեմ, և նա իսկույն կաշ-
խուժանա։

Մորաքույր Կլաշան
ելի հաց բրդեց ու
վրան կաթ լցրեց. Վոզնիկը դունչը բարձրաց-


րեց, քիթը ման ածեց, առջեկի թաթերը դրեց
ամանի մեջ ու սկսեց չպչպացնել։


— Կատուները գալիս են, — գոչեց Ոլյան։ —
Բոնեք դրանց։

Սկսում ե նրանց քշել, բայց մեկ ե, նրանք
մեջ են ընկնում։

— Վոչինչ թող գան։ Հիմա արդեն նա
նրանց կքշի, — ասաց մորաքույր Կլաշան։

Յեկ իսկապես։ Գորշ գույնի կատուն տե-
ղավորվեց, վոր կաթը լակի, իսկ վոզնիկը
կողքով հրեց նրան։ Ծակծկեց ու վոնդեց։
Եեկ կատուն տեղավորվեց։ Վոզնիկը նրան
ել կողքով հրեց։ Ծակծկեց ու վոնդեց։ Յեկ
մենակ ու ազատ սկսեց չպչպացնել։





ՉՄՈՒՇԿՆԵՐԸ

Հայրիկը պահարանից մի փաթեթ հանեց։
Բաց արեց ու ասաց։

— Վահ, բոլորը ժանդոտել են։
— Ո՞վ են «ժանդո-
տել», — զարմանում ե Ա-
լյան։ — Մի տեսնեմ։

Հայրիկը փաթեթը ցույց
տվեց, մեջը չմուշկներ են։
Միշայի չմուշկների պես։
Միայն Միշայինը մեծ են,
իսկ սրանք՝ փոքր։ Միշայի-
նը նոր են, մաքուր,
փայլուն։ Իսկ սրանք՝ հին,
կեղտոտ, շեկ։ Պտուտակ-
ներն ել չեն պտտվում։

— Այս ում դարձվորներն են, — հարցնում
է Ալյան։

— Իմն եյին, իսկ հիմա քոնը կլինեն։



— Այդպիսի բան ինձ պետք չի թու, ինչը
նման ենք Զեմ ուզում յերեսն ել տեսնել:
— Ե՞հ, մի տեսնի... Մինչև վաղն առա-
վոտ մի տեսնիք ԶԵ:

— Ինչու այդքան ուշ:
— Մինչև առավոտ յես կնորացնեմ:
— Վճաց չե, կանես... ինչպես:
— Այ, կիմանաս:
— Հայրիկը մի կոշտ թուխտ հանեց և
սկսեց չմուշկներից մե-
կը սրբել: Սրբեց, սրբ-
եց, յերկար սրբեց:
Ույան կողքին կանգ-
նել նայում եւ:



— ԶԵ վոր դու չեյիր
ուզում սրանց յերեսը
տեսնել, — ասում ե
հայրիկը, — բայց նա-
յում ես:

— Յես դրանց չեմ նայում, թղթին եմ
նայում:

Հայրիկը չմուշկը սրբում ու սրբում ե,
և չմուշկը մաքրվում — դառնում ե նոր չը-
մուշկ: Հետո սկսում ե մյուսը սրբել, և
մյուսն ել նրա պես ե դառնում:

Հայրիկը հոգնում ե, յերկու չմուշկն ել
դնում ե աթոռին ու սկսում թերթ կարդար
— Հայրիկ, — ասում ե Ույան, — մեկ ե,
պտուտակները չեն պտտվում:

— Սպասիր, — պատասխանում ե հայրիկը
յերեսը թաղելով թերթի մեջ, — պտուտակ-
ներն ել կպտտվեն:

— ՅԵՐԲ:

— Ճաշից հետո...

Ճաշից հետո հայրիկը պառկեց բազմոցին
ու քննեց:



Ույան ստիպված
եր տիկնիկ խաղար,
թե չե՝ ձանձրալի
յեր: Տիմկայի գլուխը
մի ջնջոց փաթա-
թեց, իբր թե հազ-
ըրբեց, նստեցրեց
փոքրիկ գորդին և սկսեց տիկնիկները նրա
մոտ հյուր տանել:

Տիկնիկը մոտենում ե ու ասում.

— Բարե՛, պապիք Թոռնիկիդ համբուրիք:

Տիմկան տիկնիկից հոտ ե քաշում,
իբր թե համբուրում ե: Իսկ Ույան մի ու-
րիշն ե բերում: Յերկար ժամանակ խաղում

Եր: Հայրիկն արթնացավ, նայեց, չմուշկ-
ներին ու վոնց ձայնը զցեց.

— Մայրիկ, ուր ե քո մեքենայի յուղը:

Մայրիկը սրվակով մեքենայի յուղը բե-
րեց: Հայրիկը յուղը կաթեցրեց պտու-
տակների վրա, և պտուտակները պտըտ-
վեցին:

— Ընդ՛, չմուշկներդ արդեն պատրաստ են,
ինչ պակաս են:



ՈԼՅԱՆ ՉՍՈՒԾԿՆԵՐՈՎ

Առավոտյան Ոլյան հայրիկին զարթեցրեց:

— Հայրիկ, չմուշկ խաղանք:

— Միշային ինդիր, — ասում ե հայրիկը, —
յես աշխատանքի պիտի գնամ:

— Ինչու ճիշտ չես ասում, դու հիմա
յերեկոներն ես գնում:

— Մեր գործարա-
նը նոր մեքենա յեն
բերել, — ասում ե հայ-
րիկը, — տեղը պետք
ե դրվի, յես ել պետք
ե այնտեղ լինեմ:

— Բոլորովին նոր,

վորից դեռ չի յեղել:

— Այս:

— Լավ, գնա, — և Ոլյան հոգոց հանեց:

Հետո վալենկաները հագավ, մուշտակը
հագավ ու գնաց վերև՝ Միշայի մոտ:

Միշան թեյ եր խմում ու գիրք կարդում։
— Միշա, զնանք չմուշկ խաղանք։ Հայրիկս
ինձ համար չմուշկ ե մաքրել։


— Յեգոր պապին
խնդրիր, — ասում
ե Միշան, — յես
ժամանակ չունեմ,
դպրոց պետք ե գը-
նամ։

Ույան տուն ե
գնում, լվացվում,
թեյ խմում, հագ-
նրվում ու չմուշկ-
ներն առնում-գնում ե Յեգոր պապի մոտ՝
պահակատուն։ Իսկ Յեգոր պապը մորաքույր
կատյայի վալենկաներն ե կարկատում։ Շտա-
պում ե։

— Գնա Լենա Նեստերովայի մոտ, — ասում
ե Յեգոր պապը։ — Նա յերեկոյան ե սովորում,
իսկ հիմա տանն ե։ Նրա հետ ել չմուշկ կը-
խաղա։

Ույան գնում ե Լենայի մոտ, իսկ Լենան
ճաշի համար կարտոֆիլ ե մաքրում։

— Լենա, գնանք չմուշկ խաղանք։ Այ,
հրես։



— Յեկ ոգնիր՝ կարտոֆիլը մաքրենք, —
ասում ե Լենան։ — Մաքրենք պրծնենք, կգը-
նանք։

Կարտոֆիլը մաք-
րում պրծնում ու գը-
նում են բակը։

Լենան Ույայի աջ
վոտքի չմուշկը հագ-
ցրեց, կապեց ու ասաց.

— Դեհ, խաղա։ Մի
վոտքիդ վրա վազիր, իսկ
մյուսի վրա խաղա։ Մի վոտքիդ վրա խա-
ղալը վոր սովորեցիր, մյուս չմուշկն ել կիա-
պեմ։



Ույան կանգնեց շավդի
վրա։ Շավիղը սառցից
ե, կոկ, իսկական չմուշկ
խաղալու համար։ Ո-
ւյան կանգնել ե չմուշ-
կի վրա, մյուս վոտքով
հրում ե, բայց առաջ
չի գնում ու չի գնում։

— Լենա, մյուս չը-
մուշկը հագցրու։ Մեկից բան դուրս չի գա-
լիս։

— Գնա, ե, — ասում ե: — Յերկուսից իսկի
բան դուրս չի գա:

— ԶԵ, դուրս կդա:

ԼԵՆԱՆ մյուս չմուշկն ե կապում: ՈՂՅԱՆ
կանգնում ե շավղի վրա, — բայց տեղից չի
շարժվում: Չմուշկները ծալվում, լիւխկում
են: ՄԵԿ ել տեսար վայր ընկար ու վոտ-
քերդ փռեցիր:

ՈՂՅԱՅԻ մայրիկը դուրս յեկավ պատշգամբ:

— Վայ, ԼԵՆԱ, ԼԵՆԱ: ԶԵՍ կարողանում
ՈՂՅԱՅԻ հետ չմուշկ խաղալ: ԴԵ տես՝ հիմա
մենք վոնց ենք խաղալու:

Մայրիկը ՈՂՅԱՅԻ ձեռո-
քերից բռնեց-քաշեց
դեպի իրեն: ՈՂՅԱՆ սա-
հեց: Մայրիկը յետ-յետ
ե զնում, իսկ ՈՂՅԱՆ
առաջ ե սահում:

Հայրիկն աշխատան-
քից յեկավ: Նոր սահ-
նակ բերեց:

— Ե՞հ, — ասում ե, — դու և ՈՂՅԱՆ չեք կա-
րողանում չմուշկ խաղալ: ՈՂՅԱ, բռնիր սահ-
նակից: Պինդ բռնիր ու վոտքերիդ վրա պինդ



կանգնիր: Վոտքերդ դիմ իրար կողք ու կանգ-
նիր:

Հայրիկը սահնակը սահեցրեց, ՈՂՅԱՆ ել սա-
հեց: Ինչքան ել արագ: ՅԵթե հայրիկը սահ-
նակն առած չլիներ, բան դուրս չեր գա:

Ծ Ի Տ Ի Կ Ը

Ոլյան ու մայրիկը փողոցով գնում եյին:
Պարզկան այնպես եր, վոր պահ, պահ, պահ:
Նույնիսկ միլիցիոներն ել գլխարկի տակից
գործած ու ականջավոր մի գդակ եր դրել:
Մայրիկն Ոլյայի գլուխը տաք թաշկինակ եր
փաթաթել, միայն աչքերն եյին
յերկում:



— Վազիր, Ոլյա, կտաքանաս:
Հանկարծ ճանապարհին մի
փոքրիկ գունդ ե յերկում:
Ոլյան մոտ ե վազում — ծիտիկ
ե: Փետուրները բիզ-բիզ, վոտ-
քերը փորը քաշած, աչքերը
խուփ՝ ընկած ե:

— Մայրիկ, մեռած թռչուն ե:
Մայրիկը մոտեցավ: Ծիտիկին վերցրեց,
նայեց:

— Մառել ե, յերկի:

— Տանենք տուն:

— Տանենք:

Ծիտիկին տուն տա-
րան, դրին մի տուփի
մեջ, բամբակով փաթա-
թեցին:

— Մայրիկ, նա մե-
ռած ե:

— Ուրեմն մեռած ե:

— Վայ ափսոս:

Ոլյան մի քիչ նստեց սեղանի մոտ ու
շարունակ ծիտիկին եր նայում: Քունը տա-
րավ:



— Պառկիր, Ոլյա:

— Բա ծիտիկը մենակ
պետք ե մնա:

— Ի՞նչ պետք ե լինի
վոր: Մենք կատու չունենք,
ուրիշներինն ել Տիմկան չի թողնի:

Ոլյան պառկեց քնելու:

— Ծիտիկին լավ պահիր, — ասում ե Տիմ-
կային:

Յեվ քնեց:



Առավոտյան զարթնեց, վազ տվեց ծիտիկին
տեսնի: Բայց տուփի մեջ միայն բամբակն
եր մնացել:

— Հրեն քո ծիտիկը, — ցույց ե տալիս
մայրիկը դեպի պահարանը, — տաքացել ե:

Ոլյան նայում ե պահարանին — ծիտիկը
կենդանի նստած ե պահարանի գլխին:



ՈԼՅԱՆ ԴԱՀՈՒԿՆԵՐՈՎ

— Ոլյա, — ասում ե Միշան, — յեկ դա-
հուկներով ման գանք:

— Վոնց:

— Կանգնիր հետեւ: Հրեն
քեզ համար յես յերկ-
ըորդ ողեր եմ շինել: Վոտ-
քերդ անցկացրու այդ ողե-
րի մեջ: Անցկացրիր: Ինձ
պինդ բռնիր: Բռնել ես: Այ,
յես այս վոտքով կշարժեմ,
դու ել այս վոտքով շար-
ժիր: Այ, յես սրանով, դու
ել դրանով մյուսով: Մեկ — այ, սրանով, յեր-
կու — այ, դրանով: Դեհ, զնացինք: Մեկ, յեր-
կու: Մեկ, յերկու:


Յեկ իսկապես՝ գնում են:

— Մայրիկ, յես դահուկներով գնումեմ:

— Գնա, գնա, բայց վայր չընկնես:



Հանկարծ, վորտեղից-վորտեղ — Տիմկան։
Մոտ ե վազում և ծլընգ՝ դահուկների վրա։
«Յես ել, ասում ե, ձեզ հետ ուզում եմ սահել»։
— Տիմկա, մի խանգարի։



Բայց նա արդեն չկա, վայր ե ընկել։
Առաջ են գնում, իսկ Տիմկան դարձյալ
պատրաստվում ե ծննդալու։

— Տիմկա, մի խանգարի։
Ոլյան ուզեց նրան վոնդել, բայց ինքն ել
վայր ընկավ։

— Սպասիր, — ասում ե Միշան, — հիմա
Տիմկային ել տեղ կանենք։

Տուն վազեց, մի արկղ բերեց, պարանը գցեց
արկղին ու ծայրը կապեց
Ոլյայի վոտքին։ Տիմկային
նստեցրեց արկղի մեջ։

— Նստիր։
Կանգնեց դահուկներին
ու նորից գնացին։ Միշան
առջելց, Ոլյաննրա հետե-
վից, իսկ Տիմկան բոլորից



Միշան առջելց, Ոլյան նրա հետեից, իսկ Տիմկան բոլորից հետո
արկղի մեջ

հետո՝ արկղի մեջ, Ույային պարանից թափ ե
տալիս ու տալիս:

— Ի՞նչ ես թափ տալիս, Ե՞:

Իսկ նա ելի թափ ե տալիս ու տալիս: Ո-
լյան յետ ե նայում, մեկ—ու վայր ե ընկնում:
Իր հետևից քաշում ե Միշային, ու նա ել ե
վայր ընկնում: Մենակ Տիմկան ե մնում արկ-
ղում նստած և իրեն լիզում:



ՏՈՆԱԾԱՌԸ

Ույան, ու հայրիկը գնում են կոլյա քեռոնց
մոտ: Նա քաղաքից դուրս ե ապրում: Յեր-
կաթուղով կես ժամ ճանապարհ պետք ե գնան:
Նստում են մանկական վագոն: Պատե-
րին նկարներ են կախ տված, առաստաղից՝
տիկնիկներ, արջուկների ու թոչունների
խրտվիլակներ: Գնացքը շարժվում ե, և այս
բոլոր բաները ո-
րորվում են այս ու
այն կողմը:

Վագոններում
ապրանք մանածող
կանանցից հայրիկն
Ույայի համար գա-
թա, միջով ու շա-
քարեղեն առավ: Ո-
լյան ուտում ե ու
լուսամուտից նայում: Իսկ լուսամուտից դուրս



տոնածառեր են վազում, վազում ու վազում:
Շատ Ուղիղ, խիտ, ձյան մեջ:


— Հայրիկ, յեկ տոնածառայստեղից կրտընք,—ասում ե Ոլյան:
Հրեն, ինչքան կա: Կոլյա քեռոնց մոտ գնալու ել ինչ կարիք կա:

— Այս տոնածառը դիտմամբ են տնկել, վոր ձյունը ուելսները չծածկի: Քամին դաշտից ձյունը կքշի, տոնածառերի մոտ կհավաքի, իսկ տոնածառերը չեն թողնի առաջ գնա:

Հասնում են քեռի կոլյայենց տուն: Նրա դուն վրա կողպեք ե զրված—տանը չի:

Դուն պստիկ պատշտամբի մոտի ձնակույտի մեջ մի տոնածառ ե տնկված. Կլոր, խիտ, լավ: Ավելի լավ, քան յերկաթզծի վրայի տոնածառերը:

Հայրիկն ու Ոլյան գնում են քեռի Կոլյայի հարևանների մոտ բանալին ուղելու:



Հանկարծ քեռի կոլյան ինքն ե դուրս գալիս դեմները:

— Ինձ շատ եք սպասել,—հարցնում ե:— Յես նավթի եյի դնացել:

Դուռը բաց արեց: Ներս մտան, հանվեցին: Սկսեցին թեյ խմել: Թեյը վերջացրին, իսկ Ոլյան հարցնում ե.

— Տոնածառ կտրել ես: Բա մուր ե:

— Տոնածառը պատրաստ ե, —ասում ե քեռի կոլյան: Հրես վոր պատրաստվեք գնալու, քո տոնածառը քեզ կտամ:

Ոլյան ամբողջ սենյակն աշքածեց, խոհանոց դնաց: Վոչ մի տեղ տոնածառ չկա:

— Վոչ մի տեղ չկա... Տոնածառը, գուցե, անտառմում ե մնացել:

— Անտառում ինչու պետք ե մնա, յեթե կտրված ե: Այստեղ ե, մի անհանգստանա: Դու կողքովս անցել, բայց չես տեսել:

Ոլյան նորից գնաց վնտրելու, բայց ելի վոչ մի տեղ չկա: Իսկ հայրիկն ու քեռի կոլյան խոսում և նրա վրա ուշք չեն դարձնում:



Ոլյան նստում ե աթոռի վրա և ինքնիրեն
ուռում:

Քեռի կոլյան նայում ե նրան, ձեռքից
բռնում—տանում ե լուսամուտի տակ և ցույց
տալիս այն տոնածառը, վոր դռան՝ պատշգամ-
բի մոտ ե:

— Այդ մերն ե,—զարմանում ե Ոլյան:—
Այդ յերբ ես տնկել: Ամառը յեկա, չկար:

— ԶԵ վոր յես քեզ ասացի, թե անտառից
եմ կտրել: Յեվ ահա տնկել եմ ձնակույտի
մեջ, վոր թարմ մնա, մինչև գալի չչորանա:

Պատրաստվեցին տուն
գնալ, հագնվեցին: Քե-
ռի կոլյան տոնածառը
ձնակույտից հանեց,
տոսլրակի մեջ դրեց ու
տոսլրակը կապեց:

— Հրես քո տոնա-
ծառն ել ե հագնված:

Այսպես ավելի հարմար կտարվի: ԶԵք կոտրի:
Տոնածառը տուն բերին: Տարան սենյակ,
տոսլրակից հանեցին, ուղղեցին ու դրին ջուր
լցրած դույլի մեջ, վոր յերկար ժամանակ
կանաչ մնա: Յեվ սկսեցին տոնածառը զարդա-
բել:



Զարդարեցին, մոմեր
կպցրին: Միշային ու
Լենային կանչեցին:
Մոմերը վառեցին:
Հայրիկն սկսեց հար-
մոշկա նվագել, ու
պարը բոլորեց:

Յերեխաները թըռչ-
կուում են, Տիմկան ել
նրանց հետ: Հաջում,

ուրախանում ե:

Առավոտյան Ոլյան զարթնում, տեսնում ե
տոնածառի վերևի ճյուղերը շարժվում են:
Ծիտիկն ե ճյուղից-ճյուղ ցատկում: Յատկո-
ւում ե ու ծլվլում:



ՆՈՐ ՏԱՐԻՆ

— Վեր կաց, Ույա, — զարթեցնում եմ այսիկը, — նոր տարիդ յեկել եք: Վեցերորդը:

— Բոլորովին նոր, — հարցնում եմ Ույան: — Յերեկ չկար:

— Չկար:

— Յերբեք չի յեղել:

— Յերբեք:

Այ հետաքրքիր բան: Ույան աչքի մեկը բաց արեց ու նայում եմ. այսպես ել նոր



տարի: Պահ, ինչ փայլուն եք: Մարդ կարող ել կուրանալ: Բոլոր բաներն ասես մաքրել ենք:


Վառարանը փայլում եմ, կամողը փայլում եմ, առաստաղը փայլում եմ, հատակը փայլում եմ, նստարանի կոնքը փայլում եմ, միջի ջուրն ել եմ փայլում... Իսկ լուսամուտից դուրս թե ինչ եմ կատարվում, պատմելու բան չի: Զյան ամեն մի փաթիլը ցուցաւմ, շողջողում եմ:

— Ինքնայեռը յեռնում եմ, — զոնից ձայն տվեց մորաքույր Կատյան: — Նրա ձայնն ել պայծառ եմ, զբնգան, նոր:

Ույան վեր եմ կենում և սկսում եմ ամեն ինչ նայել — նոր եմ, թե նոր չեք: Ահա գավաթը: Պուռնզը գեռ յերեկվա տարին եթուել, բայց ինքն ելի հենց նոր եք: Նույնիսկ նրա վրայի ծաղիկն ել կարծես մեծացել եք: Բացվել եք:

Ահա մկրատը: Ծայրերից մեկն առաջվապես ծալված եք: Բայց թե ինչ փայլուն եմ, ասես հայելոց լինիք: Ահա թաթխոցը վառարանի մոտ լարանով կախ եմ տված պատից: Այն ել են նոր: Պինդ-պինդ, չոր-չոր քամած եմ և որորվում եք: Ույան պարանից բռնեց, քաշեց դեպի իրեն ու բաց թողեց: «Գը՝ մ...» յերգեց պարանը, իսկ թաթխոցը թուավ ընկավ հատակին ու մի անգամ ել հատակին վեր թռավ:

— Ի՞նչ նոր «նոր տարի» յե, — զարմանում
է Ոլյան ու մտնում մահճակալի տակ՝ հին
տիկնիկը փնտրելու։ Տիմկան տիկնիկը կրծել
ու պահել ե։ Յեթե
տիկնիկն ել ե նորա-
ցել, ուրեմն, յերեկվա
տարուց բան չի մնա-
ցել, ամեն ինչ նորա-
ցել ե։



Ոլյան մտավ մահ-
ճակալի տակ, իսկ այն-
տեղ փոշի անգամ չկար, ուր մնաց թե տիկ-
նիկ։ Մահճակալի տակ հատակը նոր ե, մա-
քուր։ Ոլյան մահճակալի տակից դուրս յե-
կափ, վոտքի կանգնեց, և ինչ տիկնիկը նստած
ե լուսամուտին՝ ծաղկամանի մոտ։ Տիկնիկի
գլուխը պտավոր թաշկինակ ե կապած, իսկ
մեջքին՝ յերիգ։ Աչքերը նոր են, կլոր, ու:
բերանը՝ սիրունիկ։
Վոտքերը կարկատված
են։ Ամենից նոր տիկ-
նիկն ե դարձել։

Ոլյան տիկնիկը վեր-
ցըրեց գնաց հայրիկի
մոտ։ Իսկ հայրիկը նոր



շապիկ հազած՝ լուսամուտի մոտ նստել ե
աթոռին, նայում ե հայելուն ու սափրվում
ե։ Հայելու մեջ Ոլյային տեսավ ու սկսեց
ծամածություններ անել։ Ինքն ոճառի մեջ
կորել ե, ծիծաղելի
բան ե դարձել։

Ածելին զնդում,
ցոլցլում ու շողքը
գցում ե առաստա-
ղին։ Հայրիկը սա-
փրվում վերջաց-
նում ե ու ասում։


— Հապա, Ոլյա,
զնանք-տեսնենք.
Նոր տարուն դու յերկարացել ես, թե կար-
ձացել։

Ոլյան կանգնում ե դռան շրջանակի մոտ,
կզակը բարձրացնում ու չի շարժվում։ Հան-
կարծ կարճացած։

Հայրիկը քանոնը դրեց նրա գագաթին ու
մատիտով խազեց։

— Տես՝ ինչ ես դարձել։

Ոլյան նայեց։ Հրեն անցյալ տարվա խազը,
հրես այս տարվանը։ Պահ, ինչքան բարձր ե:
Այսպես յերբեք չի յեղեր



Վերջապես հասնում են: Հրեն հորը, վորից
ամառը ջուր են վերցնում, վոր բանջարա-
նոց ջրեն: Բոլորովին լցվել, սպիտակ ե: Մի-
այն յերկաթե խողովակն ե սևին տալիս:

— Այստեղ մի փոք-
րիկը լուրիա, — ասում
ե Միշան, — Իրես կը-
սահենք ներքե՝ ուղիղ
ցանկապատի մոտ:
Սար կղիզենք, վրան
ջուր կցանենք: Կղառ-
նա կոկ, սոթիկ:

Միշան սկսում ե ջրհորի մոտ մի խոր ճամ-
քա փորել: Փորում ու ձյունն իրար վրա յե
հավաքում:

Մոտ են վազում յերեխաները՝ փոքրիկ կո-
լյան, Պետյան, Սերյոժան, նույնպես թիակ-
ներով: Սկսում են չորսով ել ձյունը գցել:
Կույտը շուտով բարձրանում, լայնանում,
խկական սար ե դառնում:

Սկսում են սարը կարգի բերել՝ կողքերը
հավասարեցնել, գլուխը կոխկորձել:

— Ոլյա, բարձրացիր գլուխը: Դու բոլորը
կտեսնես, մեզ ել չես խանգարի: Թե չե՞մեկ
ել տեսար վայր գցեցինք:



Ոլյային նստեցնում են սարի գլխին:
— Կանգնիր, մի՛ վախենա, չես թաղվի՛:
Զյունը պինդ ե, տրորած:
Ոլյան ծնկների վրա
բարձրանում ե, հետո
ուղղվում: Ի՞նչ բարձր
ե: Նույնիսկ՝ սարսա-
փելի: Բոնելու տեղ եւ
չկա:

— Միշա, յես նըս-
տում եմ:

— Լավ, նստիր, միայն վոտքերդ քեզ
քաշիր, վոր թիակը չգիպչի:

Ոլյան պտւպուզ նստում ե: Յերեխաներն
սկսում են սարի վրա զառիվայր շինել: Զյունը

հավաքում, թիակով տըպ-
տըպում են:

Զառիվայրը պատրաս-
տում, սկսում են փոքրիկ
ճանապարհ տրորել — պըն-
դացնել:

— Ըհը՛, արդեն պատ-
րաստ ե, — գոչում ե Միշան: — Իջիր, ջուր
պիտի ցանենք:



Ոլյան ուզում ե ծնկները բանալ, չեն
քացվում. շատ ե նստել:

Անջնորհք—ասում ե Սերյոժան:—Կողքիդ
վրա ընկիր, ձեռաց կբացվես:

Ոլյան կողքի վրա յե ընկնում, իսկ Սե-
րյոժաննը հնալ—բռնում, ներքև ե քաշում:
Ոլյան վախենում ե, սկսում ե քացի-քացի
անել, ու ծնկները մեկեն բացվում են:

— Գնանք դույլ բե-
րենք,—ասում ե Մի-
շան,—կբացվես:

Նորից Միշայի կոխ-
կորտած տեղով են գը-
նում: Գնում են, գնում:
Դուրս էն գալիս մի
պինդ ու լայն շավիդ:
Ոլյան ուրախանում ե
ու վազ տալիս տուն:

— Մայրիկ, կաթի ամանը տուր: Յես ջուր
պիտի լցնեմ: Սարը ջրենք:

Ոլյան կաթի ամանը վերցնում, իր ձեռքով
դնում ե ծորակի տակ ու բերնե-բերան
ջուր լցնում: Մինչև ծորակը փակելը ջուրը
պոռունգներից թափվում ե: Մայրիկը միքիչ
թափում ե, վոր ջուրը չղճփա, ու ամանը տա-
լիս ե Ոլյային:



Ոլյան ամանը տանում ե դեպի սարը: Իսկ
այնտեղ արդեն սարը ջրում են: Ֆույլով
կժով, ինչով պատահի:



— Եհ, —ասում ե Միշան, —թող սառի:
Իրիկունն ելի ջուր շաղ կտանք: Իսկ վաղը
կսահենք:

ՍԱՀՆԱԿՈՎ

Մյուս որն Ոլյան նոր եր թեյի նստել,
Միշան լուսամուտը ծեծում եւ Զեռքերով
ինչ-վոր բան ե ցույց տալիս: Հասկանալ չի
լինում:

Մայրիկը փեղկը բաց ե անում, և նա ձայն
ե տալիս:

— Թող գա, սարից սահելու յե գալիս:

Ոլյան թեյը խմում, հազնվում, դուրս ե
գալիս: Իսկ Միշան ու իր ընկերները սարից
արդեն սլլում են:

— Յեկ,—կանչում են,—շնուտ-շուտ յեկ:
Այ, ապրես: Այ, այստեղ, աստիճաններով:
Զեռքդ տուր տեսնեմ:

Նրան քաշում են վերև: Նստեցնում են
Մերյոժկայի հետեւ:

— Նրա գոտուց բռնիր:

— Մեկ: Ուղիղ ներքեւ... Ուզում եր ճշակ,
ժամանակ չունեցավ: Արդեն շավով են

սահում: Մի շավղից մյուսն են թոշում ու
շը՝ պանկապատին: Նստիր,—ասում ե Մե-
րյոժկան,—յես քեզ յետ կտանեմ:

Վազ ե տալիս: Իսկ դեմ առ դեմ գալիս են
Միշան ու փոքրիկ կոլյան: Նրանցից հաղիվ
թեքվեցին ձյան մեջ:

Անխելքներ, — գո-
ոում ե Մերյոժկան:—
Հարկավոր ե սպասել:—
Յեկ առաջ ե վազում,

Սահնակը քաշում
հանում ե սարի գլուխը:
Նորից են նստում:

— ՀԵյ, ճանապարհ,
յեկանք, հա:

— Մե-եկ: Ուղիղ
ներքեւ... Սահում են մինչև ցանկապատը—
դրը միք: Ու ելի յետ:

Հարեան բակից մաղը ձեռքին այստեղ
յեկավ Միտկան: Բարձրացավ սարը, նստեց,
մաղի մեջ, վոտքերով հրեց—ու դեպի ներքեւ:
Դուրս յեկավ ճանապարհի վրա ու թեքվեց:

— Գնա, ե, — ծիծաղում ե Միշան:—
Սաղով ել չես կարողանում: Դե տես՝ յես
վոնց եմ առանց այդ բոլորի:



Տեղերը հավաքեց, նստեց սառցի վրա,
վոտքերը լայն չոեց ու սահեց:

Մինչև յերկրորդ շավիղը
սահում ե, և առաջ գնալու
ել ուժ չի մնում:

— Սահնակով ավելի
լավ ե:

Իսկ Միտկան մաղլրեն
ե զցում, բարձրանում ե
սարի գլուխը, դրսմի՛ փորի վրա ու սահում:

Հետո վազ ե տալիս տուն՝ սահնակը բերելու, և քրոջը՝ Լիզային կանչելու։ Լիզային

սահնակով բերում ե,
հետևիցն ել մեծ յեղբայրն
ե չմուշկներով գալիս։
Առանց չմուշկները հանելու բարձրանում ե սարն
ու սարից՝ ներքեւ։ Այ, ինչ եմ ասե՞լ։ Սահնակից
լավ ե:

Հետո յերկու աղջկան ել նստեցնում ե
սահնակին։ Ինքը կանգնում ե հետևն ու պարանն
առնում ձեռքից։ Այդպես ել միասին
ներքեւ են սահում։

Իսկ Լիզան ասես լարված լինից, յա,
յա, յա—ձայն ե տալիս։



— Դու ինչու յես գործուում, Լիզա?
Իսկ նա բերանը լայն բացարած ծիծա-
ղում ե.

— Լավ ե։

Իսկ նա ծափ ե տա-
լիս։ Ուրեմն լավ ե։


Ույան լսում ե, վոր
ապակին ծեծում են։
Նայում ե զեպի լուսա-
մուտը. լուսամուտի մեջ
մայրիկը բռնել ե Տիմ-
կային Տիմկան ուզում

ե նրա ձեռքից պոկվել։
Ուզում ե սահել։ Մոտ

ե վագում։ Սկսում են նրա հետ սահել։

Բոլորից առաջ Տիմկան նրանից հետո՝ Լիզան
նրանից հետո՝ Ույան, իսկ բոլորից հետո՝
չմուշկներով Լիզայի յեղբայրը։ Ինչ ուրմիս ե։





Մոտ ե վազում Տիմկան, սկսում են նրա հետ սոթ տար:

ԲԵՐԴԸ

Ույան Տիմկայի հետ բակից դուրս յեկավ
փողոց։ Նրանց փողոցը մի ուրիշ փողոց ե։
Այդտեղից կառք համարյա չի գնում, վորով-
հետև միայն մի կողմի վրա կարելի յե գնալ։
Մյուս կողմից գետակն ե։
Գետակի վրա կամուրջ չկա։
Ուրեմն գնալ ել չի կա-
րել։

Ույայենց տունը փողոցի
ամենավերջինն ե։ Այն
կողմը բանջարանոցներն
են։ Փողոցի գլխին շարունակ յերեխաներ են
խաղում։

Այ, հենց հիմա ել այնքան են հավաքվել վոր
հաշիվ չկա։ Նրանք ձյունից տուն ել են շինել։
Քանի ուժ ունեն, գոռում են։ Վազվզում, իրար
են դիպչում։ Յերեխաների մի մասը ձյունե
պատի հետևն իրար գլխի յեն հավաքվել, մյուս
մասը նրանց վրա յե հարձակվում։



— Տիմկա, — կանչում ե Ոլյան, — կոփիվ ե:
 Տիմկան հաջում, հարձակվում ե յերեխա-
 ների վրա, Ոլյան ել՝ նրա հետևից: Դեռ տեղ
 չհասած, շըպ՝ մի գունդ ձուն նրա կրծքին:
 Ոլյան կանգ ե առնում, շըպ՝ մի ուրիշ ձնա-
 գունդ: Տիմկան տեսնում ե, վոր իր տիրու-
 հուն նեղացնում
 են, հարձակվում ե
 տղաներից մեկի վրա,
 կախ ե ընկնում նրա
 մուշտակից ու բաց
 չփ թողնում:


— Գերին, գե-
 րին, — ձայն են տա-
 կիս չորս կողմից:

Տեսմը, Տիմկան:

Գերի յե վերցրել:

Այն տղային, վորի մուշտակից Տիմկան կախ
 եր ընկել, բռնեցին
 մի կողմ տարան:

— Դու մեր կող-
 մըն ես լինելու, —
 հարցնում են, — թե՞
 նրանց: Յեթե նրանց
 կողմն ես, մենք քեզ
 կբանտարկենք: Յեթե մեր կողմն ես, մեզ հետ
 բերդը կվերցնես:



— Զեր կողմն եմ, ձեր, — գոչում ե գերին:
 — Տիմկա, դրան բաց թող, նա մեր կող-
 մից ե:



Տիմկան տղային բաց թողեց և ուրախ ե:
 Թոշկոտում, պոչը շարժում ե:

Հանկարծ, վորտեղից-վորտեղ, յերկու տղա
 հարձակվեցին Ոլյայի վրա: Ոտարներ՝ բերդից:
 Բռնում ու քարշ են տալիս իրենց կողմը:
 Տիմկան ել նրանց հետևից: Մուշտակը բռնել
 ու կախ ե ընկել:

— Դու մեր կողմն ես, թե նրանց, — հարց-
 նում են ոտար տղաներն Ոլյային:

— Վոչ, նրանց կողմը, — պատասխանում ե
 Ոլյան ու աշխատում նրանց ձեռքից դուրս
 պրծնել:

— Դեհ, գնա, բանտարկված ես:
 Ոլյան այնպէս ե ճշում: Տիմկան կատա-
 ղում և տղաներից մեկի ձեռքը բռնում ե:

— Տես, Ե,—բղավում ե տղան։—Յես հիմա
քեզ ցույց կտամ։

Ուզում ե Տիմկային խփել, Ոլյային ե ձեռքից
բաց թողնում։ Իսկ Ոլյան յետ ե դառնում դե-
պի ընկերները։ Տիմկան ել նրա հետեից։

Ոտար յերեխա-
ներն ընկնում են
հետեից, բայց Տիմ-
կայից վախենում
են։ Տեսնում ես
վոնցն եւ կասես
գայլ լինի։ Կատա-
ղել ե, և մագերը
բիզ-բիզ կանգնել
են։ Փորձիր մոտ

գնալ միայն։ Իրենց տղաները ժամանակ չեն
կորցնում։ Խմբով վազ են տալիս դեպի բեր-
դը։ Թուչում են պատի գլուխը։

— Ուռա, — կանչում են, — մենք հաղթե-
ցինք։ Հանձնվեցեք։

Իսկ նրանք գուռում են։

— Այդ սխալ ե։ Մենք պայման չենք կա-
պել, վոր շան հետ կոխվ անենք։ Նա վոր
չիներ, միամիտ կաց, չեյինք բոնիի։



— Դե լավ, — ասում են, — յեկեք մեզ վրա։
Այդպես ավելի ուրախ ե։ Ույա, մեզ մոտ
յեկ, մեզ մոտ։

Տիմկայի հետ մտան բերդը։ Դե, հիմա բոնիր
նրանց։ Տիմկան այնպես ե վրա հասնում,
այնպես ե կատաղում։ Հենց ուղղակի քթից
ե բռնում։

— Մենք այդպես
համաձայն չենք։ Տես-
նում ես ինչ խորա-
մանկն են։ Ոլյային
տվեք մեզ, այն ժա-
մանակ կտեսնեք։

Տղաներն սկսեցին
վիճել։ Վիճեցին, հա վիճեցին։ Իսկ Տիմկան
ինչ-վոր մի կատու տեսավ։ Բերդից դուրս
պղծալ՝ ու նրա հետեից։ Են տեսնելն եր,
վոր նրան տեսան։

Իսկ առանց Տիմկայի խաղան անհետաքրքիր
դարձավ։ Ոլյան վազ տվեց տուն։



ՎՈՉՆԻԿԸ ՔՆԱԾԵ

Ոլյան մայրիկի հետ մի անգամ ել գնաց
մորաքույր Կլաշայի տուն։ Իսկ նրա մոտ
նորություն՝ վոզնիկը քնել եւ Այ քեզ նո-
րություն։ Ի՞նչ զարմանալու բան կա։ Նա
անցյալ անգամ ել քնած եր։ Բոլորն ել
կարող են քնել։

— Իսկ դու ինչքան կարող ես քնել —
հարցնում ե մորաքույր Կլաշան Ոլյային։

— Վոնց թե ինչքան։ Իրիկունը կքնեմ և
առավոտը կզարթնեմ։

— Իսկավելի կարող ես քնել։ Իրիկունը քնես,
դիշերը քնած մնաս, ցերեկը քնած մնաս և
զարթնես այն ժամանակ, յերբ նորից իրի-
կուն եւ կարող ես։

— Յերբ հիվանդ եյի, կարողանում եյի։

— Իսկ յերբ առողջ ես։

— Չեմ փորձել։

— Իսկ կարող ես ամբողջ ձմեռը քնած
մնալ և միայն զարունը զարթնել։

— Վոչ։ Այդպես վոչ մեկը չի կարող
քնած մնալ։

— Իմ վոզնիկը կա-
րող եւ Ուրիշ ամեն մի
վոզնի ել կարող ե քնած
մնալ։ Կկծկվի, մի գունդ
կլառնա ու կմնա քը-
նած։ Վոչ ուտում ե,
վոչ խմում, վոչ տեղից
շարժվում — քնում ե։

— Գուցե նա մե-
ռել եւ։

— Յեթե մեռած
լիներ, կբացվեր։




— Յես մի կամա-
ցուկ-կամացուկ մտիկ
տամ։

— Չես կարող տես-
նել։ Նա այնպես ե
կոլումբել իր անկողնի
մեջ բամբակի ու լա-
թերի մեջ, վոր վոչ մի
կերպ չես կարող բաց անել։ Միայն ինքը
կարող ե բացվել։

Ոլյան նայեց բուֆետի հետևութիւնը ճիշտ ե,
միայն լաթերն են գունդ վայր ընկած:

— Քո կատուներն ել են քնում.

— Վոչ, նրանք այդքան չեն կարող քնել:
Մի գաղան ել կա, վոր կարող ե այդպես,
քնել,—արջը:



Ոլյան մտածեց, մտա-
ծեց ու ասաց.

— Ի՞նչ ձանձրալի յե:


— Դու ել գնդակ խաղա:

— Վոչ, այդքան յերկար քնելն ե ձանձրալի:
Ուրեմն նա բոլորովին-բոլորովին չգիտե՝ ձը-
մեռն ինչ բան եւ Շատ ձանձրալի յե... Մուկը

նրանից փոքր ե, բայց
չի քնում: Ծիտիկը
նրանից փոքր ե, բայց
նույնպես չի քնում:
Բա նա ինչու յե
քնում:

— Չմեռը չի կարո-
ղանում ապրել: Չը-

մեռն ուտելու բան չունի: Այդ պատճառով ել
քնում եւ իմ վոզնիկը համ կուշտ ե, համ
տեղը տաք: Նա այդպես ել սովորել ե ար-
դեն:



— Ուրեմն նա ուրիշներից ել քիչ ե
ապրում:

— Քիչ, քիչ: Իհարկե՝ քիչ: Խեղճ վոզնիկ:

Ոլյան մի անգամ ել նայեց պահարանի
հետևի լաթերի գունդը ու կպակ մայրիկին:

— Գնանք տուն:

Բ ՈՒ Ւ Ը

Այսոր բակը չես գնա: Զյուն ե գալիս,
քամին սուլում ե: Բուք ե: Չորս կողմը
ծածկել ե:



Ուր: Ուզում ե տուն գալ: Ներս վազեց
ու սկսեց թափ տալ: Յայտերը չորս կողմն
են թռչում:

— Կորի, անպիտան,—մայրիկն սկսում ե
հայրոյել նրան:—Ամբողջ հատակը թրջեց:

Կորի խոհանոց: Բայց նրա իսկի պետքն ել
չի: Միայն ուրախանում ե: Հատակի վրա
վազվզում:



Դուրսը վատ ե,
իսկ ներսն ել բքից
ե մթնել:

Ծիտիկը վորոշեց,
վոր արդեն իրիկուն
ե: Թռավ պահարանի գլուխը: Գլուխը գրեց
թևերի տակ ու քնեց:

Ույայի համար ել ձանձրալի յե:

Տիմկան ե միայն ուրա-
խանում: Հատակի վրա
լավ վազվզեց, մաքրվեց և
սենյակից-սենյակ ե թո-
շում: Նա իրեն չորաց-
նում ե:

— Ի՞նչ ե, Ույա, դու
ձանձրանում ես,—ասում
ե հայրիկը: Տես, Տիմկան
վո՞նց ե բացվել:

— Նրա ել:

— Վ՞նչց թե «նրա ել»: Ուր ե քո տիկ-
նասալյակը: Հիմա մենք նրան կլծենք: Նրան



գործի կղնենք: Ինչու յե նա աննպատակ
վազվում:

Հայրիկը մահճկալիշտակից սայլակը հա-
նեց, Տիմկային բռնեց ու սայլակը կապեց
նրա վզնոցից:

— Ույա, Տիմկա-
յին կանչիք մոտդ:

Ույան կանչեց: Տիմ-
կան վազեց նրան, իսկ
սայլակը հետևեց թռոչ-
կոտում եւ Տիմկան
հասավ Ույային, հան-


կարծ հայրիկը ձայն տվեց.

— Տիմկա, այստեղ յեկ:

Նա վազեց գեպի հայրիկը:

Հասավ հայրիկին, Ո-
ւյան կանչեց: Նա ար-
դեն գլխի ընկափ: Ինքն
ե սկսում առանց կան-
չելու վազվել, ինչ-
պես առաջ: Սայլակը
թռչկոտում, թխթխկում եւ:

Աղմուկից ծիտիկը զարթնեց: Սկսեց պա-
հարանի վրա թռչկոտել: Թռչկոտում ու ծըլ-
վըլում եւ:



Տիմկա, այստեղ յեկ

— Տեսնում ես, ծիտիկն ել ե. ուրախացել —
ասում ե հայրիկը։ Հրեն, այն ել արեք։

Ճիշտ ե, արել յերևում եր։ Սկզբից
վախվխելով, հազիվ-
հազ։ Հետո հանկարծ
դուան պես բացվեց։
պայծառ-պայծառա-
ցավ։

Ույան լուսամու-
տից դուրս նայեց։
Բակի ծառերն ու
թփերը տոն որի պես զարդարվել են։

— Ուզում եմ զբունել զբունել։
Հագնվեց, Տիմկային հետն առավ։ Դուրս



յեկավ նախասենյակ։ Ուզում ե դուռը բաց
անել, բայց չի բացվում. ձյունն առաջը փակել
ե։ Ույան լուսմ ե՝ մեկը պատշգամբը թխթիս-
կացնում, ճանկուում ե։ Զյունն ե քերում։

— Միշտ, այդ դժւ յես։
— Յես եմ, յես... Հիմա քեզ համար ճա-
նապարհ կրացեմ։

Դուռը բաց արեց։ Ինչ պայծառ ե։ Մար-
դու աչք ե կուրացնում։

Ույան աչքերը կկոցում, չի կարողանում
նայել։ Հազիվհազ սկսում ե աչքերը բաց
անել։ Ավելի ու ավելի, և ընտելանում ե։

Խաղաղ, տաք։ Ծիտիկները ցանկապատի
վրա՝ ձյունի մեջ լողանում, ծլվլում են։
Ագուավը գալիս—նստում ե ծառին։ Զյունն
ալյուրի պես ծառից ցած ե թափվում։

Ույան գնում ե զբունելու։ Հասնում ե
հարևանի դուան պստիկ պատշգամբին, ու ել
տեղ չկա. սրբած չի։ Տիմկան ուղեց առաջ
ընկնել և թաղվեց։ Դուրս յեկավ ու նորից
թաղվեց։ Յետ դարձավ ու սկսեց վրան թափ
տալ։

— Գարունը գալիս ե,—ասում ե Միշտ։
— Ինչպես թե գարունը,—զարմանում ե
Ույան։ — Բոլորովին ձմեռ ե։

— Հրեն, ինչ տաքացել ե։ Յեթե վաղը
նորից տաքանա, ձյունե մարդ կինենք։

— Ի՞նչ տեսակ։
— Գլուխ, աչք, քիթ ունեցող։ Այ, թե
ինչ տեսակ։ Զյունից։

ՀՅՈՒՆԵ ՄԱՐԴԸ

Դուրսը տաք եւ Յերեկվանից տաք։ Տանիքից ջրի շիթեր են թափում, լուսամուտների տակի ձյունի մեջ նրանցից կլոր ծակեր են առաջացել։ Դուն պստիկ պատշգամբի ձյունը մաքրված եւ Մուգ գույն եւ ստացել, թաց եւ։

Միշան ու Պետյան
ձյան վրայով մի ա-
հագին գունդ են գլ-
լորում։ Գլորում են, և
այն ավելի ու ավելի
յե մեծանում։ Զյունը
կպչում ե նրան։

— Դու այդ ի՞նչ ես շինում, — հարցնում
ե Ույան։

— Զնե մարդ։

— Բա ի՞նչու յեք գլորում։

— Վոր գունդը մեծանա։

Նրանց ուժն այլևս չի պատում գլորելու
և նրանք բաց են թողնում։ Միշան մի փոքր
գունդ ե շինում։



— Հիմա ել գու գլորիք, — ասում ե նա
Ույային, իսկ մենք մի քիչ նստենք։
Ույան փքվում ե։ Ուզում ե գունդը շար-
ժել, բայց տեղից չի շարժվում — ասես կպած
ինի։

Ույան գունդը
հրում տանում ե
կոկ շավղի վրա ու
գլորում։

— Անշնո՛րհք, —
ասում ե Միշան։

Շավիղով գլորելիս չի կպչի։

— Ախր այստեղ չի գլորվում, — պատաս-
խանում ե Ույան։

— Միշան վրա յե վազում և գունդը ձյան
վրայով գլորում։ Յերկու տակ գլորեց։ Պե-
տյայի հետ վերցրեց զրեց մեծի վրա։ Հետո
մի ուրիշ փոքրիկ գունդ ել շինեցին ու զրին
ուղիղ զագաթին։

— Վոտքերը կան, ձեռքերը կան, գլուխը
նույնպես, — ասում ե Միշան, — հիմա ել աշ-
քեր շինենք։ Պատշգամբի մոտից յերկու կտոր
ածուխ ճարեց, խրեց ձյունե մարդի գլխի
մեջ։ Զյունե մարդն աչքեր ել ունեցավ։

Պետյան մի հատ լուլա վայր զցեց, կըպ-



ցըրեց աչքերի տակ: Մարդը քիթ ել ունեցավ:
Տեսնում են, վոր Ոլյան նախասենյակից
ծաղկաման ե բերում: Ծաղկամանը գլխար-
կի տեղ զնում են ձյունե մարդու գլու-
խը: Միշան ձյունե մարդին բերան ե պր-
ծում, բերանը մի ճյուղ ե զնում ու
ճյուղին գլանակի մնացորդ հագնում: Ձյունե մարդն սկսում է գլանակը ծխել:

Ոլյան մտիկ ե տալիս նրան ու ասում.
— Ի՞նչ գարշելին ե: Իմ ծաղկամանը տվեք:
Յես յետ պիտի տանեմ:
— Կաց, սպասիր,
ասում ե Միշան,— տես՝
թե ինչ եմ անում:

Տուն ե վազում, յերկու հատհավի փետուր բերում,
խրում ձյունե մարդի քթի տակ: Ձյունե
մարդը բեխ ել ունեցավ:

Աչքերը չովել են, քիթը վեր ե ցցվել,



բեխերն այս ու այն կողմն են գնացել գլա-
նակն ել բերնին ե:

Զյունե մարդը մի շատ ծիծաղելի բան
դարձավ:

Ոլյան կանգնել մտիկ ե տալիս նրան ու
հրհուում:

Դուրս վազեց Տիմկան: Հպարտ-հպարտ
վրա պըրծավ ձյունե մարդուն ու հանկարծ
վախեցավ: Պոչը քաշեց ու յետ փախավ:

Վաղ տվեց պստիկ պաղշպամբն ու այնտե-
ղից սկսեց հաջել:


Հաջեց ու հաջեց:

Հանկարծ ձյունե մար-
դը վոր գլխով չի ան-
ում: Գլուխը գլորվում
վայր ե ընկնում — ծաղ-
կամանը փշուր-փշուր
ե լինում:

— Վոչինչ — ասում ե Միշան, — ծաղկա-
մանը ծանրություն արեց: — Հիմա ուրիշ
գլուխ կշինենք:

Ուզում եյին շինել, բայց նրանց ճաշի կան-
չեցին:

Այդպես ել ձյունե մարդն անգլուխ մնաց:
Մորաքույր կատյայի համար ցախ բերին: —



Սկսեցին սահնակը դարձնել։ Խփեցին ձյունե
մարդուն ու բոլորովին վայր գցեցին։



Ճաշելուց հետո Ոլյան
դուրս ե գալիս զբոնելու։
Միշային հարցնում ե։
— Ձյունե մարդն ուր ե։
Իսկ Միշան ուրիշ գոր-
ծով եր զբաղվում — բարձ-
րացել եր տանիքը՝ ձյու-
նը քերելու։ Միշայն Տիմ-
կան վազ տվեց ձյունե կույտի մոտ, յետ նա-
յեց Ոլյային ու պոչը շարժեց։

«Տես, ասում ե, թե ուր ե նա՝ ձեր ձյունե
մարդը, և բոլորովին զարհուրելի չե»։

Ճաշելուց հետո Ոլյան
դուրս ե գալիս զբոնելու։
Միշային հարցնում ե։

— Ձյունե մարդն ուր ե։
Իսկ Միշան ուրիշ գոր-
ծով եր զբաղվում — բարձ-
րացել եր տանիքը՝ ձյու-
նը քերելու։ Միշայն Տիմ-

կան վազ տվեց ձյունե կույտի մոտ, յետ նա-
յեց Ոլյային ու պոչը շարժեց։

«Տես, ասում ե, թե ուր ե նա՝ ձեր ձյունե
մարդը, և բոլորովին զարհուրելի չե»։

ԳԱՐՈՒՆԸ ԼՈՒՍԱՍՈՒՏԻՆ

Գիշերը սաստիկ անձրե եր գալիս։ Տա-
նիքն այնպես եր թխթխկում, կարծես վրան
սահնակ եյին քշում։ Ոլյան զարթնում, զար-
մանում ե։ Մայրիկին զարթնեցնում ու հարց-
նում ե.

— Այն ի՞նչ ե։

— Քնիր, քնիր, — ասում ե մայրիկը —
զարունն ե գալիս։ Ձյունն ե քշում։

Առավոտյան Ոլյան վեր ե կենում։ Լու-
սամուտից մտիկ ե տալիս, բայց բակում
հաղիվ-հաղ ե ձյուն յերեսում։ Առվակներ են
վազում, փայլ տալիս։ Ծիտիկները թռչկոտում
են։ Միշան մետակ կուրտկայով վազում ե՝
յերկաթե մի ձող ձեռքին։

Ոլյան լուսամուտը ծեծում — նրան կան-
չում ե, բայց նա չի ել լսում։ Շտապում ե։

Լվացվեց, թեյը խմեց ու դուրս յեկավ։
Գետինը սոթլիկ ե։ Վազել դժվար ե։ Ձյունը

գունդ-գունդ թափված եւ Հին, ծանր: Սառուցը հաշյայի պես չորս կողմը բռնել եւ կողերը գետնից պոկվել, հալվել են: Ամուր խփի՝ կջարդվի: Ույան կանգնեց պոնդին ու վեր թռափ: Զե, չի ջարդվի: Շատ պինդ եւ:

— Ոլիկ, — կանչնմ եւ Միշան թփերի միջից, — յեկ այստեղ: Տես՝ թե այստեղ վնաց եւ թռչում:

Իսկ ինքը յերկաթե ձողով թըխկ հաթըխկ: Այնպես եւ դղրդացնում, կարծես տաշտի յե խփում: Ույան թփերի արանքով ներս եւ մտնում:

Միշան կանգնած եւ սառցե կեղեկի վրա: Ձողով մեկ-յերկու խփում եւ թե չե, սառուցը ճաքում, մի մեծ կտոր պոկվում եւ:

Այդպես ել հարկավոր եւ նրան՝ սառցին: Չմեռը վերջացել, գարուն եւ յեկել:

— Գարուն եւ, իսկ խոտ չկա, — սառմ եւ Ույան:



— Դու շատ ես շտապում: Զյունը կչքվի, գետինը կտաքանա, ու խոտը դուրս կգա: Միշան գնաց դպրոց: Ույան



Տիմկային առավ, նստեց դռան առաջի փոքրիկ պատշգամքի վրա ու մնաց նստած:

Նստեց, նստեց, հանկարծ Լենա Նեստերովան մոտից անցնում եւ:

— Ույա, եղ ինչու յես նստել: Գնայիրքեզ համար ման գալու:

— Սպասում եմ, մինչև վորդետինը տաքանա, խոտը դուրս գա:

— Դու շատ ես շտապում: Այդքանը մեռվա մեջ չի լինի: Դեռ ինչքան ձյունպիտի գա, պարզկա պիտի անի:

Լենան մի փունջ ձյուղ եւ պոկում ու տայիս Ույային:



— Այ, առ: Միշտ մեջ ջուր լցրնւ և ճյուղերը
դիր մեջը: Տերե կտան: Մեկն ուռենի յե, իսկ
ես մեկելը՝ բարդի: Քեզ համար լուսամուտին
գարուն կլինի: Ավելի շուտ, քան դուրսը:

Ոլյան ճյուղերը տուն տարավ: Լենայի
ասածի պես արեց ունստեց լուսամուտի մոտ:


— Այդ ինչու յես նստել, Ոլյա, — ասում
ե մայրիկը, — գնայիր զբոսնելու:

— Սպասում եմ, վոր ճյուղերի տերեները
բացվեն:

— Դու շատ ես շտապում: Տերեները
բացվելու համար մի
քանի որ ե հարկավոր:

Մեկ ել հանկարծ ծի-
տիկը վրա թռավ: Ճյու-
ղից բռնեց ու շիշը շուռ
տվեց: Զուրը թափվեց,
իսկ ծիտիկը վախեցավ — թռավ պահարանի
գլուխը:

— Յեկ, շիշը տանենք խոհանոց, — ասում
ե մայրիկը: — Ծիտիկն այնտեղ չի թռչի: —
Առավոտները լվացվելիս ստուգիր, տես՝
տերեներ չկան արդյոք: Հենց վոր տերեները
բացվեն, այդ ավագակին բաց կթողնենք:
Թող դուրսը չարաճճիություններ անի: Նա
այնտեղ ավելի ազատ կլինի:



ԶՈՒՐ ԵՆ ԽՄՈՒՄ

Անցավ յերկու որ:

Ոլյան առավոտյան զարթնեց, ու մայրիկը
նրան ասաց.

— Գնա խոհանոց,
լվացվիր: Այնտեղ քո
տերեները բացվել են:

Ոլյան վազ ե տա-
լիս խոհանոց: Իսկ
ճյուղերի վրա պըս-
տիկ-պստիկ տերեներ են դուրս յեկել: Կըպ-
չուն, հոտով:

— Մայրիկ, մայրիկ, — կանչում ե Ոլյան, —
տես, ճյուղերն ինչ թելիկներ ունեն:

— Թելիկներս վորն են:

— Հրեն, շիշ շրի մեջ:

— Այդ արմատիկներն են: Նրանցով ճյու-
ղերը չուր են ծծում խմում:

Ոլյան ականջը դնում ե շիշն:



— Բա ինչու չի լսվում, թե ինչպես են
ծծում:



նելու:

Հայրիկը մտիկ տվեց ու սկսեց լվացվել:
Ոլյան ականջը դրեց շնչն՝ ուղղակի ճյուղերի
մոտ, ու վրաց ե գոռում:

— Յես լսում եմ, թե նրանք վրաց են
ծծում: Ճիշտ, լսում եմ՝ խ... խ...

— Այ քեզ անխելք,—ասում ե հայրիկը:—
Դու ականջդ ճյուղին ես քսում, այդ ե, վոր
լսում ես: Սպասիր, լուսամուտի տակ մարդ
կշինենք, գազար, բողկ կցանենք, են ժա-
մանակ քո ճյուղերն ել կտնկենք: Դու քո
այդին կունենաս:

— Կկանաշի՞ ել

— Կկանաշի?

Ոլյան մտածեց, մտածեց ու հարցրեց.

— Իսկ ձմեռը ճյուղերը քննում են:

— Քնում են:

Ուրեմն մենակ վոզնիկը չի քնողը: Ճիշտ:
Ծառերն ել ենք նում, խոտն ել ե քնում, սուն-
կերն ել են քնում... Իսկ գարնանը զարթնում
են: Վոզնիկը կզարթնի ու կհորանջի, նրանք
ել կհորանջեն: Վոզնիկը կճմկոտի, նրանք ել
կճմկոտեն: Վոզնիկը կասի:—«Ես ինչքան
քնել եմ»: Արդեն գարունը յեկել ե»: Նրանք
ել կասեն:—«Ճիշտ վոր գարուն ե, մենք ել
ամբողջ ժամանակ քնել ենք»: Նա ել կու-
րախանա, կուրախանա, նա ել կսկսի գլու-
կոնձի տալ: Այ, այսպես:

Ոլյան բարձրացավ թախտի վրա, նստեց
գլանիկին, ձեռքերը դեմ տվեց նստատեղին,
գլուխը կուցրեց ու գլակոնձի տվեց:

— Այ, այսպես:

Ոլյան այնքան գլխկոնձի տվեց, մինչև
հոգնեց: Հետո Տիմկային հանեց թախտի վրա
ու սկսեց թափալգլոր
անել: Թափալգլոր ե
անում, իսկ նա գոռում
ե ճղճղում ե.—դուրը
չի գալիս:

Տիմկան Ոլյայի ձեռ-



քից պրծավ, թախտից ցած թռավ ու սկսեց
անկունից-անկյուն վազվզել։ Ույան ել՝ նրա
հետևից։ Աղմուկի վրա ծխտիկն ուրախանում,
սկսում ե պահարանի գլխին թռչկոտել ու
ծլվալ։



Հանկարծ Ույան կանգ
ե առնում ու մի նոր
ըան մտածում։
Մայրիկ, գնանք մո-
րաքույր Կլաշայենց
մոտ։ Վոզնիկը կտես-
նենք։ Հիմա նա ել ե զարթնել։

— Յես ժամանակ չունեմ նրա մոտ գնալու։
Հայրիկիդ խնդրիր, թող նամակ գրի։ Մորա-
քույր Կլաշան քեզ կպատասխանի։

ՎՈԶՆԻԿԸ ՀԵՌԱԽՈՍՈՎ ԽՈՍՈՒՄ Ե

— Ավելի լավ ե՝ յես ու դու հեռախոսով
խոսենք մորաքույր Կլաշայի հետ, — ասում ե
հայրիկը։ — Միայն սպասիր, թող մութն ընկնի։
— Ինչու մութն ընկնի՝ նոր։

— Չե վոր դու ինքդ ես ինձ ասել, թե
վոզնիկը զարթնում ե այն ժամանակ, յերբ
մութն ընկնում ե։


— Յես հո կարճ քնի մասին չեմ ուզում,
յերկար ձմեռվա քնի մասին եմ ուզում հարց-
նել։

— Յես ել քեզ ձմեռվանի մասին եմ ա-
սում։ Յեթե նա զարթնել ե, ուրեմն, իրիկվա
դեմ պահարանի հետևից դուրս կզա ընթրիք
անելու։ Այդ ժամանակ ել մենք նրա հետ
կխոսենք։

— Ի՞նչպես։

— Կլսես ելի։
Հենց վոր մութն ընկավ, նրանք գնացին

իրենց փողոցի անկյունի մեջ տունը։ Այս-
տեղ հեռախոս կա։ Հայրիկը զանգահարեց։
Կարգադրեց մորաքույր կլաշային կանչել։
Մորաքույր կլաշան մոտեցավ։ Հայրիկն
Ույային բարձրացրեց հեռախոսի մոտ ու փողը
տվեց նրան։ Ույան փողն առավ ձեռքն ու
ականջ դրեց։



— Բարե՛, Ույա։ Ի՞նչ պիտի հարցնես։ Դե
հարցը ու տեսնեմ։

— Հարցը ու, թե վոզնիկը զարթնել ե, —
Ույայի ականջին ասաց հայրիկը։

Ույան վախեցավ, ու հետո հազիվ լսելի
ձայնով հարցրեց։

— Վոզնիկը զարթնել ե։
— Զարթնել ե, զարթնել ե, — ասաց ձայնը
հեռախոսից։
— Թող ինքն ասի, — խնդրեց Ույան ավելի
կամաց։
— Լավ, — պատասխանեց ձայնը, — բայց մի
քիչ սպասիր, յես նրան բերեմ։



Յերկար սպասեցին։ Ո-
ւյայի ձեռքը հոգնեց փողը
բռնելուց և նա տվեց
հայրիկին։
— Դե հիմա լսիր,
և հայրիկը փողը դրեց Ո-
ւյայի ականջին։
— Ույա, դու լսում ես, —

հարցը հեռախոսից։

— Լսում եմ, — պատասխանեց Ույան ու
հանկարծ լսում ե՝ Փը'Փ,
Փը'Փ... Վոզնիկը փնչաց-
նում ե։

Ուրեմն, ճիշտ ե, զարթ-
նել ե։

— Փնչացնում ե, —
ասաց Ույան հայրիկին
ու հանկարծ սիրտ առավ։



— Բարեւ, վոզնի՛կ,—բարձր գոռաց նա:—
Այդ յես եմ, Ոլյան: Զայնս լսում ես:

Իսկ վոզնիկը նորից՝ փը՛ֆ, փը՛ֆ...

— Լսում ե, —ասաց Ոլյան հայրիկին:

— Դե նրան ասա, վոր հյուր ես գնալու
իրեն, —խորհուրդ տվեց հայրիկը, —ու կնանք
տուն: Քո ել քնելու ժամանակն ե:



— Մենք քեզ հյուր պի-
տի գանք, —գոռաց Ոլյան
ուժովը մեկ ու փողը ձեռ-
քից գցեց: Հայրիկը հազիկ
կարողացավ ըունել: Բոնեց
ու կախ տվեց՝ ուր պետքն
ե:

Յեվ Ոլյան վազ տվեց
տուն՝ մայրիկին պատմելու, թե ինչպես ե
վոզնիկի հետ հեռախոսով խոսել:

Մյուս որն Ոլյան բոլորի մոտ ել յեղավ
կենայի, Միշայի, մորաքույր Կատյայի...
Բոլորի: Ու բոլորին ել պատմեց վոզնիկի
մասին:

ՅԵՂԻՆՁԵ ԽԱԾՈՒՆ

Շահ մեջ գրած ճյուղերի վրա պայծառ,
կպչուն, հոտով տերեներ են դուրս յեկել:
Դուրսն ել տաքացել ե:

Ոլյան սկսում ե բարակ շորերով զբոս-
նել: Զբոսնում ե, զբոսնում ու հանկարծ տուն
ե վազում, կանչելով.

— Խոտը, խոտը:
Մայրիկը խոտն առնում, մտիկ ե տա-

լիս: — Այս, — ասում ե, — յեղինջ ե: Վոր-
տեղից ես գտել:

— Ցանկապատի մոտ: Այն-
տեղ շատ կա:

— Դե առ ես զամբյուղը,
զնա մի լիքը քաղիր: Յես դրա-
նից խաշու կեփեմ: Համով բան ե:

Ոլյան զամբյուղովը մեկ քաղեց: Մայրիկը
յեղինջը դատարկեց սեղանին: Սկսեց ջոկել:




Արմատները, անցյալ տարվա տերեներն ու
բոլոր կեղտոտ բաները ջոկեց, զցեց կեղտամա-
նը: Իսկ յեղինջը լվաց լցրեց թջե ամանի մեջ,
վրան միս դրեց, ջուր լցրեց, աղ արեց ու
դրեց վառարանի մեջ:

Պահարանից յերեք հատ
ձու հանեց, փոքրիկ կաթ-
սայի մեջ դրեց, վրան յեփ-
ջուր լցրեց ու ափսեյով
ծածկեց — թող յեփվեն:

Հայրիկը ճաշի յեկավ:
Մայրիկը թջե ամանը բե-
րեց: Յեղինջե խաշուն լրց-
րեց ափսեները, ամեն մեկի մեջ մի կըպ-
ճած ձու դրեց ու վրան կաթ լցրեց:



Հապա, —
ասում ե, — փոր-
ձենք տեսնենք Ո-
լյայիս գյուտը:
— Կաց, Ոլյա, յես
քեզ համար ձուն
գանակով կտրեմ:
Գդալով դու չես
կարող: Հուպ տվիր, թե չե՞ սոթ կտա — դուրս
կընկնի: Վրադ կթափես:



Մինչև մայրիկը կզնար խոհանոցից դանակ
բերելու, Ոլյան սկսեց ձուն գդալով սեղմել:
Զգույշ-զգույշ ե սեղմում: Հրես, հրես սոթ
կտա: Նույնիսկ շոգեց—շատ դժվար ե: Բայց և
այնպես կտրեց:

— Ե՞ս, ապրես,—ասում
ե հայրիկը: — Դու արդեն
բոլորովին մեծացել ես:
Յերբ ճաշ ես հնարել, ու-
րեմն մեծացել ես:

Ոլյան սկսեց խաշուն ուտել: Այ թե հա-
մով ե:

— Յես ամբողջ ամառը յեղինջ պիտի
քաղեմ:

— Այդ մեկն արդեն չե,—ասում ե հայ-
րիկը: Յեղինջը մատղաշ ժամանակն ե լավ:
Մեծացավ թե չե, ել բանի պետք չի: Կղա-
խանա: Ամառը մեզ համար դու մի ուրիշ
բան կճարես:



ԾԻՑԻԿԸ ԹՌԱՎ ԳՆԱՑ

Դուրսն ել ավելի տաքացավ: Ծառերի
վրա քնքուշ տերեներ դուրս յեկան: Զյուն
բոլորովին չի մնացել ու գետինը բոլորովին
չորացել ե: Խոտն սկսել ե դուրս գալ ու
բիզ-բիզ ցցվել:

Մայրիկը ձմռվեղկը հանել—տարել ե խոր-
դանոցը: Լուսամուտից բամբակները վերց-
րել ե:

— Հապա, — ասում ե, — ծիտիկիդ հետ վհնց
պիտի անես: Դու դուրս կտանես, թէ թող-
նենք լուսամուտից դուրս թռչի:

Ոլյայի ափսոսը գալիս ե ծիտիկին: Չի իմա-
նում ինչ անի: Լուռ կանգնել նայում ե նրան:
Իսկ ծիտիկը կարծես հենց այդտեղ եր ու այդ-
տեղ: Կպել ե փեղկին ու լուսամուտից նայում
ե դուրս: Տխուր, նույնիսկ ծպտուն չի հանում:


— Թող ինքը գլխի ընկնի, — ասում ե մայ-
րիկը, — այդպես ավելի հետաքրքրական ե:
Յեթե ինքը դուրս թռչի, մեր լուսամուտը



Սկսեց թևերը թափ տալ, կտցով ապակին ծե-
ծել։ Պոկ յեկավ ուղղակի լուսամուտի գոզը,
մայրիկի թևերի տակ։

— Ի՞նչ ե, խենթ, — ասում ե մայրիկը, —
ազատության հմտ ես առելք Լավ, լավ, նըս-
տիր, չորս կողմ դ նա-
յելք Ույա, մի կտոր
հաց տուրք Յես բրդեմ
սրա առաջ, գրավեմ:

Ոլյան այս կողմն
Ե ընկնում, այն կողմն
Ե ընկնում: Վոչ մի
տեղ հաց չկա: Իսկ ծիստիկն այլևս չսպասեց:
Թը՝ ոռ՝ նստեց փեղկի ծայրին: Կտուցը մաքրեց



կհիշի: Կզա, կայցելի:
— Դե լնվ, — հա-
մածայնում ե Ուան:

Սայրիկը լուսա-
մուտը բաց արեց,
թարմ ողը լցվեց սե-
նյակը։ Ծառերի վրա
աղատ ծիտիկները
ծլվլում են։ Ոլյայի
ծիտիկը հուզվեց։

Սկսեց թևերը թափ տալ, կտցով ապակին ծեծել: Պոկ յեկավ ուղղակի լուսամուտի գոզը, մայրիկի թևերի տակ:

Ոլյան այս կողմն
ե ընկնում, այն կողմն
ե ընկնում։ Վո՞ւ մի

տեղ հաց չկա: Իսկ ծիտիկն այլևս չսպասեց:
Թը՛ռռ՝ նստեց փեղկի ծայրին: Կտուցը մաքրեց

այս կողմը դարձավ, այն կողմը դարձավ, ու
թր՛ոռ՝ առաջ, մոտիկ ճյուղի վրա:

— Ծիվ, ծիվ... Այսինքն՝ մնաս բարե՛, Ույա:
Գլուխ ե տալիս՝ ու ցտեսություն:

— Հրեն, հրեն,—կանչում ե Ոլյան:—Յես
տեսնում եմ նրան: Հրեն, ծառին նստած ե
նստարանի վերև:

Ույան հիշեց, վոր իր գոգնոցի գրպանում
հացի կտոր կա: Հանեց ու ըրդեց լուսամուտի
գոգր:

— Ծիտիկ, ծիտիկ,—կանչում ե Ոլյան,—
ինչ կեր:

Յեկ սկսեց յեղունգներով թիմթխկացնել
լուսամուտի գոգը:

Թիսթիսկացնում ե ու Թիսթիսկացնում, իսկ
ծիտիկը պինդ նստել ե ծառին ու տեղից չի
շարժվում։ Հետո ավելի վերև ե թռչում և
աշքից կորչում։

— Հիմա նա ել յետ չի դա, — հարցնում
ե Ռյան:

— Ինչպես թե չի գա: Կզաք: Հայի վշտանքը
թող լուսամուտին ու Տիմկային նստեցրու
աթոռին:

— Տիմկային ինչու:

— Վոր կուտ ուտելու ժամանակ կատուն
ծիսիկին չբռնի։ Դու ել կճանաշես, վոր այդ

մեր ծիտիկն եւ Ռւրիշ ծիտիկները մեր կատ-
վից վախենում են, իսկ մերը չի վախենում:

Ոլյան Տիմկային

Նստեցրեց աթոռի
վրա. Նստիր: Տիմկան
նստում, մտիկ ե տա-
լիս լուսամուտին:
Ողն ե հոտոտում,
աչքերը կկոցում: Իսկ
ծիտիկը չկա:




Խեղճն այնպես ել
անտեղինստեց մինչև
իրկուն: Մայրիկն ընթրիք բերեց: Հարցնում
ե նրան.

Այդ ինչ ե: Ինչպես տեսնում եմ մինչև
հիմա մնացել ես նստած:


Իսկ նա միայն փոշտաց ու ժպտաց:
— Քո Ոլյան բա ուր ե գնացել:



Տիմկան ականջները
ցցեց, մարաղ մտավ ու
ձգվեց դեպի լուսամուտը:
— Զբոսնմամ ե, — հարց-
նում ե մայրիկը: — Տես-
նմամ ես դրան: Ինքն զբոս-
նում ե, իսկ Տիմկան նստել
ե: Գնա նրան զտիր: Մեկ



Ե, ծիտիկը յեկող չի։ Տես, մութն ինչպես
ե ընկել։ Վաղուց մի տեղ քնել ե։ Դե, գնա
Ույայի հետեւից, կանչիր թող գա ընթրիքի։



Տիմկան լսում ե «զնա»,
լսում ե «Ույա»—այս բա-
նը նա հասկանում ե,—
թոշում ե լուսամուտի
գողն՝ ու դեպի բակ։
— Հավ, հավ, հավ։ Այ-
սինքն՝ վորտեղ ես, Ույա։ Ընթրելու ժամա-
նակ ե։

ՅՏԵՍՈՒԻ ԹՅՈՒՆ

Դուրսը բոլորովին տաքացել եր։ Նույն-
իսկ շող եր։ Ույան մինչև մութն ընկնելը
մետակ զգեստով վազվզում եր։

Տան մոտի մարգերում սածիլ տնկեցին՝
պամիզոր, վարունգ, գազար, բողկ ցանե-
ցին։ Չորս կողմ ձյու-
ղեր ել տնկեցին։ Ձյու-
ղերի մեջտեղը հայրի-
կը տաշեղներից նըս-
տարան շինեց և չորս
բոլորն ավագ լցրեց։ Յեվ Ույան արդեն իր
այգին ունի։

Խոտն ամբողջ բակը ծածկեց։ Ծառերը
տերեններով ծածկվում եյին։ Չորս կողմը
կանաչ ե, ուրախ ե։

Զրհորի մոտի, վորտեղ ձյունե սարն եր,
լորենիններից Միշան պարան կապեց։ Կարե-
լի յեր ճոճանակի պես ճոճվեր։ Ույան նըս-



տում ե պարանին, Տիմկային դնում ծնկներին ու ճոճվում:

Մի անգամ նրանք ճոճվում են, հանկարծ հայրիկը:

— Յեկ, Ոլյա, հազնվիր: Գնում ենք գյուղ՝ տատի տունը:

Ոլյան ուրախացավ: Ճոճանակից ցած թըռուավ ու տուն գնաց հազնվելու: Տիմկան ել նրա հետեից: Գնդակի պես զլորվում եւ Նույնպես ուրախ եւ:

— Տիմկային ել պիտի տանենք, — հարցնում ե Ոլյան հայրիկին:

— Նրան ուր: Նա այնտեղ տատի բոլոր հավերին կվախեցնի:

— Զի վախեցնի: Յես կտամ հավից հոտ կքաշի, նրանց հետ կծանոթանա ու ձեռք

շի տա: Տանենք...

— Նրա համար տոմս պիտի տոնենք:

— Պետք չի... Յես նրան կդնեմ զամբյուղի մեջ: Նա զամբյուղի մեջ մեռածի պես կմնա:

— Դե լավ:




— Տիմկա, նստիր լուսամուտին, — հրամայում ե Ոլյան, — մի խանգարի:

Տիմկան լուսամուտին նստել՝ դողում ե: Վախենում ե, չտանեն: Հանկարծ ծիվ-ծիվ: Ծիտիկն իջավ լուսամուտին: Կտցեց մի փրշուրը, կտցեց մյուսը:

— Մայրիկ, մայրիկ, — ասում ե Ոլյան փսփսալով, — մեր ծիտիկը յեկավ: Լուսամուտին Տիմկայի հենց պոչի մոտ՝ փշրանքներն ուտում ե: Զի վախենում:

— Նա քեզ ճանապարհ ե դնում տատիդ տուն:



Տիմկան պոչը պտտացրեց: Ծիտիկը վախեցավ, թռավ փեղկի ծայրը: Ինչպես այն անգամ, յերբ նրան բաց ելին թողնում:

— Նա զալու յե մոտդ, — ասում ե Ոլյան փսփսալով, — նրան հաց զցիր: Մի ափսե ջուր դիր մոտը:



Ուսն պատրաստվեց,
հագնվեց: Տիմկային դրեց
զամբյուղի մեջ ու հայրի-
կի հետ գնաց դեպի տը-
րամվայ:

Նստեցին տըրամվայ: Հա-
սան կայարան: Տոմս գը-
նեցին ու գնացք նստան:
Շոգեշարժը ճշաց և նրանց
տարափ տատի տուն:

Գարունը վերջացավ, ամառը յեկավ:
Յտեսություն, Ոլյա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Սառցալուան	3
Հետքերը	7
Վոզնիկը	11
Չմուշկները	17
Ոլյան չմուշկներով	21
Ծիտիկը	26
Ոլյան դահուկներով	29
Տոնածառը	33
Նոր տարին	38
Սարը	43
Սահնակով	48
Բերդը	53
Վոզնիկը քնած ե	58
Բուքը	62
Զյունե ձարդը	68
Գարունը լուսամուտին	73
Չուր են խմում	77
Վոզնիկը հեռախոսով խոսում ե	81
Յեղինջե խաշուն	85
Ծիտիկը թուավ գնաց	88
Յտեսություն	95



Հեղվական իմքազիր՝ Հ. Պետրոսյան
Տեխ. իմքազիր՝ Ան. Գասպարյան
Սլքազիչ՝ Թ. Հովակիմյան

III

Գլավլիտի լիազոր՝ Դ.—3599 Հրատ. № 4576.
Պատվեր 356. Տիրաժ 3000.
Թուղթ 62×94. Տպագր. 61/₄ մամ.
Մեկ մամ. 19200 նիշ. Հեղինակային 2¹/₈ մամ.
Հանձնված և արտադրության 1 ապրիլի 1938 թ.
Ստորագրված և տպագրության համար 28 ապրիլի 1938 թ.
Գինը 2 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0390447

534

3291

ԳԻԱԸ 2 Ր.

ЛЕВ ЗИЛОВ

Оленькина зима

Гиз Арм. ССР, Ереван 1938